

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԻԼԻԹ ՍԵՐԺԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ

**ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՏԵՐՄԻՆԱՍՏԵՂԾՍԱՆ ՄԵՋ
(անգլերեն իրավաբանական տերմինների
նյութի հիման վրա)**

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի «Գլաձոր» համալսարանում:

Գլխական դեկավար՝ քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Ք.Գասպարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Ա.Ա.Սիմոնյան
քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն.Հ.Գասպարյան

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012թ. ապրիլի 27-ին, ժամը 16⁰⁰-ին, Երևանի պետական համալսարանի 009 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. մարտի 23-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, ք.գ.թ., պրոֆեսոր՝

Ե.Լ.Երզնկյան

Հարուստ և հղկված բառապաշարը լեզվի գոյության գրավականն է, հետևաբար յուրաքանչյուր լեզու հարուստ և զարգացած է համարվում, եթե ունի հարուստ և ճկուն բառամթերք: Բառապաշարի զարգացման համընդհանուր գործընթացում իր կարևորագույն տեղն է զբաղեցնում տվյալ լեզվի տերմինաբանության մշակման և հարստացման խնդիրը: Մշակելով, հարստացնելով և մշտապես կատարելագործելով իր տերմինաբանությունը (տվյալ դեպքում նկատի է առնվում գիտության այս կամ այն ճյուղի տերմինաբանական համակարգը, ներառյալ, իհարկե, այդ բնագավառների մասնագիտական հասկացությունների ամբողջությունը)¹ լեզուն ինքնին կատարելագործվում է՝ դառնալով առավել ընդգրկուն, խորքային, լայնագործուն և բազմաշերտ:¹ Հետագոտությունները ցույց են տալիս, որ, թեև տերմինաբանական ընդհանուր հարցերի ուսումնասիրության գործում կան զգալի ձեռքբերումներ, այնուամենայնիվ, քիչ չեն այն խնդիրները, որոնք քննության կարիք ունեն:

Անգլերենի իրավաբանական տերմինաբանությունը, որպես տերմինաբանական կոռ և կայուն համակարգ, գիտական նշանակալից հետաքրքրություն է ներկայացնում թե՛ լեզվաբանների և թե՛ իրավական տարբեր համակարգեր ուսումնասիրող իրավագետների համար: Մեր քննությունից ակնհայտ է դառնում, որ անգլերենում իրավաբանական շատ տերմիններ² ստեղծվել են ոչ միայն տվյալ լեզվի շտեմարանի բառերից ամանցման, բառաբարդման կամ հապավման միջոցով, այլև հենց ընդհանուր գործածական բառերի բառիմաստի փոփոխությամբ՝ հատկապես փոխաբերական տեղաշարժի միջոցով՝ հիմնվելով արտաքին, ներքին, որակական կամ գործառնության հնարավոր նմանության, նմանօրինակության կամ զուգորդության վրա:

Մեր քննությունից ակնհայտ է դառնում, որ տերմինաստեղծման փոխաբերական միջոցը եղել է մնում է չափազանց կենսունակ: Ընդհանուր առմամբ, տերմինաբանական այս կամ այն բնագավառ նոր միավորներով պարբերաբար համալրելու պահանջը և գիտական հասկացություններ անվանելու համար տերմինաբանական նոր միավորների ստեղծման անհրաժեշտությունը բավարարվում են արդեն գոյություն ունեցող բառային միավորների կիրառության՝ հիմնականում լեզվի առօրյա գործածական բառերի տերմինացման միջոցով: Այս դեպքում է, որ ընդհանուր օգտագործման բառապաշարից մասնավոր տերմինաբանություն ներթափանցած բառը, ենթարկվելով փոխաբերականացման (մետաֆորիկ փոխակերպման), ստանում է տերմինաբանական կոնկրետ իմաստ: Այս գործընթացն աշխատանքում որակել ենք իբրև փոխաբերական տեղաշարժ՝ փոխառելով տվյալ հասկացությունը գեղարվեստական

¹ Cabré T. M. *Terminology: Theory, methods and applications* (Terminology and lexicography research and practice). / Sager J.C. (ed.), J. A. DeCesaris (tr.). Amsterdam: John Benjamin Publ. Comp., 1999, pp. 4-5.

² Անգլերեն *term* բառը փոխառվել է լատիներեն *terminus* բառից, որը բառացի նշանակում է «սահմանային նշան», «սահման», իսկ հայերեն թարգմանվում է մաս «գոր», «գորույթ» կամ «գիտարար» (Խլղարյան Ֆ.Հ. *Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու*: Երևան, «Լույս» հրատ., 1976, էջ 98):

թարգմանության ոլորտից³ Սույն աշխատության շրջանակներում առաջին անգամ փորձ է արվում «փոխաբերական տեղաշարժ» հասկացությունը դիտարկել որպես տերմինաստեղծման գործընթացում կիրառելի և արդյունավետ միջոց. միջոց, որի կիրառության արդյունքում ընդհանուր օգտագործման բառապաշարից լեզվական միավորն իմաստային փոխակերպման (վերաիմաստավորման, փոխաբերականացման) ենթարկվելով ներթափանցում է մասնավոր տերմինաբանություն՝ ստանալով տերմինային իմաստ և արժեք: Հիմնվելով արտաքին, ներքին, որակական կամ գործառութային հնարավոր նմանության, նմանօրինակության կամ զուգորդության վրա՝ տերմինաստեղծման այս գործընթացի հիմքում փոխաբերական տեղաշարժի դիտարկումը կարող է հանդիսանալ բառիմաստի խորքը ներթափանցելու, դրա բազմաշերտ բնույթը բացահայտելու բանալի, որը հնարավորություն կընձեռի իմաստային փոխակերպման ենթարկված միավորի փոխաբերականացման հիմքը հանդիսացող աղբյուր տիրույթի բառային միավորից բխեցնել վերջինիս տերմինային նշանակությունը: Այլ կերպ՝ վերաիմաստավորման նմանատիպ մեխանիզմը դիտարկել որպես հասկացական մի տիրույթի ընկալումը մյուսի միջոցով և բացահայտել հասկացական աղբյուր և թիրախ տիրույթների փոխհարաբերակցության արդյունքում առաջացած միասնության ողջ գործընթացը: Այս մոտեցումը թույլ է տալիս վերհանել տերմինաստեղծման լայն կիրառություն ունեցող արդյունավետ միջոցներից մեկը՝ ուսումնասիրելով տերմինացման յուրօրինակությունը, նմանօրինակ տերմինների հնարավոր առկայությունը և դրևորումներն անգլերեն իրավաբանական տերմինաբանության մեջ:

Սույն աշխատանքի **առարկան** տերմինաբանության այնպիսի հարցերի քննությունն է, որոնք առնչվում են անգլերեն իրավաբանական տերմինաբանության լեզվաբանական հայեցակերպին: Այլ կերպ՝ ուսումնասիրության առարկան բառակազմության ոչ թե ձևային կամ ձևայնաբանական, այլ բառիմաստային եղանակներն են, որոնց միջոցով բառիմաստի փոփոխման արդյունքում կերտվում են իրավաբանական տերմիններ՝ տերմին-դարձույթներ:

Ատենախոսության **նպատակն** է համակողմանի քննության ենթարկել փոխաբերական տեղաշարժի հիմնահարցը որպես անգլերեն իրավաբանական տերմինահամակարգի ստեղծման գործածական և հույժ կենսունակ միջոց: Սույն աշխատանքը նպատակ չի հետապնդում խնդրո առարկա դարձնել տերմինի կառուցվածքային-ձևաբանական քննությունը, այսինքն՝ վերլուծության ենթարկել անգլերեն իրավաբանական տերմինների կառուցվածքային-ձևային կաղապարը: Այն միտված է քննարկելու տերմինաբանության այնպիսի հարցեր, որոնք առնչվում են անգլերենի իրավաբանական տերմինահամակարգի կերտման՝ փոխաբերական տեղաշարժի վրա հիմնված միջոցներին ու եղանակներին:

³ Մասնավորապես տե՛ս Гаспарян С. К. *Фигура сравнения в функциональном освещении*. Ереван: ЕГУ, 2000, с. 70, 88:

Ատենախոսության հիմնական նպատակին հասնելու համար աշխատանքում առաջ են քաշվում հետևյալ **խնդիրները**.

1. քննության առնել անգլերեն իրավաբանական տերմինահամակարգի՝ որպես մասնավոր տերմինահամակարգի կայացման գործընթացում կիրառելի տերմինաստեղծման հնարավոր միջոցներն առհասարակ,

2. պարզաբանել, թե անգլերենում իրավաբանական տերմինահամակարգի առանձնահատկությունների և բնութագրական հատկանիշների ձևավորումն ինչ հիմքերով է պայմանավորված, և ըստ այդմ՝

3. պարզել, թե իրավաբանական անգլերենը որպես մասնավոր տերմինահամակարգ մինչև մերօրյա էական զարգացումներին հասնելը կայացման ինչ ճանապարհ է անցել, և թե արդյոք սույն մասնավոր տերմինաբանությունն իրավաբանների՝ իրենց մենաշնորհը պահելու նպատակով գաղտնի համաձայնության կամ «զավաղության» հետևանք է⁴, թե դարերի ընթացքում բնականոն զարգացում ապրած լեզվի գործածության յուրովի ոճավորված ոլորտ,

4. ուսումնասիրել մարդկային լեզվի անբաժանելի բաղադրատարր հանդիսացող փոխաբերական մտածողության նշանակությունը և հնարավոր դրսևորումներն անգլերեն իրավաբանական խոսքում և տերմինաբանության մեջ,

5. պարզաբանել փոխաբերական տեղաշարժի տեղն ու դերն անգլերենի իրավաբանական տերմինահամակարգի ստեղծման գործընթացում՝ խնդիրը դիտարկելով իմաստաբանական հիմքի վրա,

6. բառիմաստային վերլուծության մեթոդի կիրառմամբ փորձել վերհանել փոխաբերական տեղաշարժի միջոցով ստեղծված անգլերեն իրավաբանական տերմինների հնարավոր դրսևորումները, այդ թվում՝

7. լուսաբանել իրավաբանական անգլերենում առկա իմաստաբովանդակային առումով ոճատարբերակիչ այդօրինակ տարրերի բնութագրական գծերը և գործառական արժեքը:

Ատենախոսության շրջանակներում առաջին անգամ փորձ է կատարվում ուսումնասիրել մասնագետների տեսադաշտից մինչ այժմ դուրս մնացած մի խնդիր, այն է՝ փոխաբերական տեղաշարժի հիմնախնդիրն անգլերեն իրավաբանական տերմինների ստեղծման գործընթացում: Ըստ այդմ՝ ատենախոսության **նորույթը** պայմանավորված է հենց բուն հարցադրումով, որի վերհանումը ճանապարհ է հարթում տվյալ մասնավոր տերմինաբանության առավել արդյունավետ և նպատակային կիրառության համար:

Ըստ էության, հատուկ ապացույցներ չի պահանջում այն փաստը, որ իրավաբանական անգլերենն այսօր հանդես է գալիս որպես միջազգային կարևորություն ունեցող ենթալեզու: Ներկայումս օրենքի լեզվի արտալեզվական հիմքն ընդլայնվել է՝ ներգրավելով համընդհանուր, միջազգային հասարակական, քաղաքական արտաքին և ներքին շահերի բախում: Օրենսդրական բազմաթիվ դրույթներ արտացոլող իրադրություններում լեզվական արտահայտ-

⁴ Իրավաբանների դավադրության տեսությանն է անդրադարձել Սթիվեն Սթարքը *Why lawyers can't write* գիտական հոդվածի շրջանակներում (Stark S. *Why lawyers can't write.* // Harv. L. Rev., Vol. 97, 1984):

ման ճշգրիտ և միևնույն ժամանակ երևակայությունից ոչ գուրկ ձևերի կիրառությունն իրավաբանական խոսքը դարձնում է ուսումնասիրության առավել հետաքրքիր ոլորտ: Այս առումով սույն ուսումնասիրությունը փորձ է նոր խոսք ասելու տերմինաբանության ոլորտում ընդհանրապես և անգլերեն լեզվով օրենսդրական հաղորդակցման բառապաշարի ուսումնասիրության, դրա առանձնահատկությունների վերհանման բնագավառում մասնավորապես: Ուստի, աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է այն վճռորոշ դերով, որ այսօր իրավաբանական անգլերենն ունի հասարակական կյանքում:

Մեթոդաբանական առումով մեր ուսումնասիրության համար ելակետային է դիավել բառիմաստային վերլուծության մեթոդի կիրառումը:⁵ Այլ կերպ՝ մեր ուսումնասիրությունը կատարելիս առաջնորդվել ենք բառիմաստի քննությանը՝ իմաստաբանական վերլուծության ենթարկելով անգլերեն իրավաբանական տերմինների մեծաթիվ քանակություն՝ նպատակադրվելով պարզել, թե ինչ նշանակություն ունի փոխաբերականացումը նոր տերմինների ստեղծման հիմքում:

Հետագոտված փաստական **նյութը** շուրջ 25.000 իրավաբանական տերմիններ և տերմինակապակցություններ են՝ զետեղված մի շարք բառարաններում⁶ և ԱՄՆ-ի Գերագույն դատարանին առընթեր կենտրոնի պաշտոնական կայքում⁷ տեղադրված դատական գործերում:

Ատենախոսության **տեսական նշանակությունը** պայմանավորված է սույն ուսումնասիրության մեջ առաջադրվող հարցադրումների ճշգրտմամբ, պարզաբանմամբ և հիմնավորմամբ: Սույն հետազոտության մեջ կատարված քննությունը և արդյունքում արված եզրահանգումները որոշակի ներդրում են բառարանագիտության տեսության զարգացման գործում:

Ատենախոսության **գործնական արժեքը** բխում է անգլերենի դասավանդման գործընթացում սույն հետազոտական աշխատանքի արդյունքների արդյունավետ կիրառության և հատկապես իրավաբանական անգլերենի գործնական ուսուցման ոլորտում դրանց ներդրման հնարավորությունից: Իրավաբանական տերմինաբանության իմաստաբանական բնութագրական գծերի հասկողմանի քննությունը և դրանց գործառական յուրահատկությունների գի-

⁵ Patejosky J., Bogural B. *Lexical semantics in context*. NY: Oxford Univ. Press, 1996, pp. 90-95; Geeraerts D. *Hundred years of lexical semantics*. // M. Vilela & F. Silva (red.), *Actas do Encontro Internacional de Linguística Cognitiva* Porto: Faculdade de Letras, 1999, pp. 123-154 և այլն:

⁶ Palmatier R. A., Ray H. L. *Sports talk: A dictionary of sports metaphors*. Greenwood Press, 1989; Mellinkoff D., *Dictionary of American legal usage*. St. Paul: West Publ., 1992; Gifis S. H., *Dictionary of legal terms* (2nd ed.). Barron's Publ., 1993; Riley D., *Check your Vocabulary for Law: Dictionary of law* (2nd ed.). Peter Collin Publ., 1996; Hill G. N., Hill K. *Real life dictionary of the law: Taking the mystery out of legal language*. General Publ. Group, 1997; Andrianov S. N., Berson A. S. *English-Russian law dictionary*. RUSSO, 2003; Garner B., *A dictionary of modern legal usage* (2nd ed.). New York: Oxford Univ. Press, 2003; Collin P. *Dictionary of law: English-Armenian-English*. Yerevan: Gitanq, 2005; Borisenko I.I., Saenko V.V. *Contemporary Russian-English law dictionary*. RUSSO, 2006.

⁷ <<http://supreme.justia.com/>>

տակցումը կարող է, անշուշտ, իր նպաստը բերել իրավաբանական անգլերենի դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու, անգլերենի կիրառության առաջընթացը պատշաճ մակարդակով խթանելու գործին: Կատարված ուսումնասիրության արդյունքները կարող են նպաստել նաև անգլերենը հատուկ նպատակներով ուսուցանելու համար նախատեսված ուսումնամեթոդական ձեռնարկներ կազմելու գործին:

Աշխատանքի կառուցվածքը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, ենթագլուխներից (ըստ ամիրաժեշտության), եզրակացությունից, օգտագործված գրականության, բառարանների ու համացանցային կայքերի ցանկից և 60 էջից բաղկացած 19 հավելվածից: Ներածությունն ու յուրաքանչյուր գլուխ ավարտվում են ծանոթագրություններով, որոնք լրացուցիչ տեղեկություններ և մեկնաբանություններ են տալիս աշխատանքում առաջ քաշված հիմնախնդիրների առնչությամբ:

Ներածության մեջ ընդհանուր գծերով ներկայացվում են ուսումնասիրության թեման և հիմնահարցերը, հիմնավորվում են կատարված հետազոտության արդիականությունն ու նորությունը, պարզաբանվում են ատենախոսության նպատակն ու խնդիրները, ներկայացվում է հետազոտության փաստական նյութը, աշխատանքի մեթոդաբանական հիքը, ինչպես նաև կատարված ուսումնասիրության տեսական և գործնական արժեքները:

Առաջին Գլուխը՝ «Տերմին, տերմինաբանություն և տերմինահամակարգեր», բաղկացած է երկու ենթագլխից՝ «Տերմինային ստորակարգություն» և «Տերմինի գնահատման չափանիշները»: Այս գլխում անգլերեն իրավաբանական տերմինների նյութի հիման վրա հանգամանորեն ուսումնասիրվում ու վերլուծվում են տերմինաբանական տարաբնույթ առանցքային հարցեր և այնպիսի կարևոր երևույթներ, ինչպիսիք են՝ տերմինաբանությունը և տերմինահամակարգերը, տերմինային ստորակարգությունը, տերմինին առաջադրված պահանջները կամ տերմինի գնահատման չափանիշները՝ նպատակ հետապնդելով վեր հանել դրանց դրսևորումներն անգլերեն իրավաբանական տերմինների շրջանակում, որոնք այնուհետ, միանշանակ, կօգնեն ավելի լավ հասկանալ անգլերենի իրավաբանական տերմինահամակարգի առանձնահատկությունները:

Տերմինահամակարգերի ստորաբաժանումների և տերմինաբանական ստորակարգության հարցերի քննությունը բերում է այն եզրակացության, որ տերմիններն ու, առավել ևս, դրանց արտահայտած հասկացությունները, ինչպես նաև ստորակարգության սանդղակը և համադասության շարքերը համակարգային բնույթ ունեն: Խոսելով տերմինաբանության համակարգային բնույթի մասին՝ պետք է հասկանալ տերմինների ձևական և իմաստային համակարգայնությունը, ավելի դիպուկ՝ տերմինային համակարգայնությունը: Ասվածի հիմքում ընկած է տերմինահամակարգերի տրամաբանական և լեզվաբանական համակարգայնությունը: Մեր կազմած տերմինաբանական ստորակարգային սխեմատիկ սանդղակների վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ անգլերեն իրավաբանական տերմինաբանական մակրոհամակարգերի և միկրոհամակարգերի միջև առկա են համադասային և ստո-

րակարգային հարաբերություններ: Տերմինային համակարգայնությունը պետք է հասկանալ որպես տվյալ տերմինահամակարգի կամ միկրոհամակարգի ստորակարգային սանդղակի համադասական շարքի մեջ ներմուծվող միանդամ և բազմանդամ տերմինների բաղադրիչների միասնականություն և միատիպություն: Իսկ տերմինների տրամաբանական համակարգայնությանն ուղղված պահանջը կարելի է ընդունել որպես պարտադիր, մինչդեռ լեզվական (հարացուցային) համակարգայնության ոչ դյուրին իրագործելի պահանջը՝ կամընտրական:

Տարբեր հեղինակներ, բազմիցս անդրադառնալով տերմինի բնութագրման և գնահատման խնդիրներին, փորձել են շոշափել տերմինին առաջադրված պահանջները, վերանայել դրանք կամ առաջադրել տերմինի կայացման նոր չափանիշներ:⁸ Հանրագումարի բերելով տերմինին առաջադրվող պահանջների մասին մեկնաբանությունները՝ կարելի է արձանագրել, որ տվյալ տերմինահամակարգի համար «մեկ հասկացություն – մեկ բառային ձև» սկզբունքը տերմինագիտության համար անխախտելի, իսկ տերմինի բնութագրման և գնահատման չափանիշների դիտարկման պարագայում առանցքային պետք է համարել: Եվ քանի որ դժվար է «կատարյալ» տերմիններ հայտնաբերել տեսությունից դուրս, իրատեսական է խոսել տերմինի գնահատման ցանկալի և ոչ պարտադիր չափանիշների մասին՝ առանձնացնելով տերմինին առաջադրված չափանշային պարտադիր պահանջներ և ցանկալի կամ կամընտրական պահանջներ:

Աշխատանքի **Երկրորդ Գլխում**՝ «Տերմինաստեղծման միջոցներն իրավաբանական անգլերենում», անդրադարձ է կատարվում տերմինային բառապաշարի ստեղծման հնարավոր միջոցներին և եղանակներին առհասարակ:

Գիտության և տեխնիկայի զարգացումը և քաղաքակիրթ ազգերի տարաբնույթ շփումներն առիթ են դառնում մասնագիտական հատուկ առարկաների, երևույթների անվանման, նորանոր հասկացությունների արտահայտման, դրանք մյուս ժողովուրդներին փոխանցելու կամ նրանցից փոխառելու համար: Արտալեզվական այնպիսի գործոններ, ինչպիսիք են հասարակական կյանքում անդադար տեղաշարժը, գիտատեխնիկական նորանոր ձեռքբերումները և նոր գիտաճյուղերի ի հայտ գալը, ծնում են նորանոր տերմինների ստեղծման, դրանցով մասնագիտական տերմինաբանության հարստացման և, հետևաբար, տվյալ լեզվի ամենազգայուն համակարգը՝ բառապաշարը, անթիվ տերմիններով պարբերաբար համալրելու անհրաժեշտություն:

⁸ Реформатский А. А. *Что такое термин и терминология*. М.: Наука, 1959, с.10-14; Лотте Д. С. *Основы построения научно-технической терминологии. Вопросы теории и методики*. М.: Наука, 1961, с.18-36, 72-79; Кузькин Н. П. *К вопросу о сущности термина*. // Вестник. ЛГУ, вып. N 20, 1962; Даниленко В. П. *Русская терминология. Опыт лингвистического описания*. М.: Наука, 1977, с.15, 65; Канделаки Т. Л. *Семантика и мотивированность терминов*. М.: Наука, 1977; Աղայան Է. Բ. *Տերմինագիտություն*: Երևան, ԵՊՀ հրատ., 1978; Волкова И. Н. *Стандартизация научно-технической терминологии*. М., 1984.

Բոլոր լեզուներում տերմինահամակարգերը ձևավորվում են տերմինաստեղծման տեսականորեն հնարավոր միջոցների՝ տերմինաբանական բառակազմության, տերմինացման, տրանստերմինացման (վերատերմինացման կամ կրկնակի տերմինացման), հապավման, տերմինների փոխառության և պատճենման կիրառմամբ,⁹ որոնք հնարավորություն են տալիս հարստացնել լեզվի բառապաշարն ու լեզվի ընդհանուր տերմինաբանությունը և ապահովում են տերմինների ակտիվ ու կենսունակ գործածություն, թեպետ յուրաքանչյուր լեզու և տվյալ լեզվի առանձին մասնավոր տերմինահամակարգ այդ հարցում ցուցաբերում է որոշակի ինքնատիպություն:

Այս գլխում, ելնելով աշխատանքի պահանջներից, տերմինաստեղծման արտաքին միջոցի՝ փոխառությունների տեսանկյունից լուսաբանվում է նաև իրավաբանական լեզվի ձևավորման պատմական գործընթացը, և բառիմաստային մակարդակում բազմակողմանի քննության են առնվում իրավաբանական անգլերենի համար գործառական առումով առավել վառ դրսևորվող լեզվական միավորների առանձնահատկությունները:

Անգլերենի պատմությունն իրավաբանական անգլերենի և անգլերեն իրավաբանական տերմինաբանության հիմնաքարն է, քանի որ իրավաբանական անգլերենն արտացոլում է այն լեզուների միախառնումը, որոնք ընդհանուր առմամբ անգլերենի ձևավորման գործում մեծ դեր են խաղացել: Անգլերեն ներթափանցած բառային փոխառությունների յուրացման և ամրակայման գործընթացն իրավաբանական տերմինների համակարգը բնութագրող կայուն օրինաչափություն է, և անգլերենում իրավաբանական տերմինաբանության կայացման գործում փոխառությունը տերմինաստեղծման կենսունակ միջոց է: Թեև մինչ այսօր անգլերենում պահպանվել են անգլոսաքսոնական իրավաբանական որոշ տերմիններ, բայցևայնպես, իրավաբանական անգլերենում տերմինաստեղծման նպատակով ներմուծված օտարալեզու տերմինների նախատիպերը հիմնականում ունեն լատինական ծագում, սակայն դրանց մի մասը միջնորդավորված է փոխառնվել լատիներենից, իսկ մի զգալի մասն անգլերենի բառապաշար է ներթափանցել ուղղակիորեն հին ֆրանսերենից¹⁰:

Ինչպես ակնհայտ է դառնում այս գլխում կատարված մեր ուսումնասիրությունից, փոխառությունն անգլերենի իրավաբանական տերմինաբանությունը ոչ միայն համալրող և հարստացնող, այլև յուրատիպ և խրթին դարձնող գլխա-

⁹ Корумнов С. И., Самбунова Г. Г. *Краткое методическое пособие по разработке и упорядочению научно-технической терминологии*. М.: Наука, 1979, с. 38-44; Иванов С. З. *Структурно-семантические особенности отраслевой терминологии*. // Структурно-семантические особенности отраслевой терминологии. Воронеж: изд. Воронежского ун.-та., 1982, с. 20-26; Суперенская А. В., Подольская Н. В., Васильева Н. В. *Общая терминология. Вопросы теории*. / Канделаки Т. Л. (ред.). М.: Наука, 1989, с. 192-224.

¹⁰ Maley Y. *The language of the law*. // Language and the Law. / Gibbons J. (ed.). New York: Longman, 1994, pp. 11-50; Bryson B. *The mother tongue: English and how it got that way*. Perennial, New York: Avon, 2001, pg. 55; Գալստյան Ա., Պարոնյան Շ. *Անգլերենի պատմության հիմնահարցեր*: Երևան, ԵՊՀ հրատ., 2008, էջ 59-79; Haigh R. *Legal English* (2nd ed.). Routledge-Cavendish, Taylor & Francis Gr., 2009, pp. 2-5, 304-308.

վոր գործոններից է, որի արդյունքում տվյալ մասնավոր տերմինաբանությանը բնորոշ են այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են՝

- ֆրանսերենի շարադասությանը հատուկ որոշչի ետադաս գործածությունը (օր.՝ *fee simple* – *հողատարածքի տիրության անսահմանափակ իրավունք*, *title absolute* – *բացարձակ իրավունք*, *the title above mentioned* – 1. *տնօրինման կամ տիրության վերոնշյալ իրավահիմքը*, 2. *վերոնշյալ օրինագծի անվանումը*),

- *e* տառի հավելումը բառասկզբում, ինչպես՝ *esquire* (պարոն) միավորը *squire* տարբերակի փոխարեն,

- հիմնականում լատիներենից և ֆրանսերենից փոխառված տերմինները (օր.՝ *torts* ֆր., *trove* ֆր., *voir dire* ֆր., *habeas corpus* լատ., *inter alia* լատ. և այլն),

- սեփական – օտարալեզու հարաբերակցությամբ հոմանիշային կրկնակտերմինները (օր.՝ *previously acquitted* → *autrefois acquit* ֆր. → *նախկինում արդարացված* (նույն հանցագործության համար), *previously convicted* → *autrefois convict* ֆր. – *նախկինում դատասպարտված* (նույն հանցագործության համար), *guilty knowledge* – *mens rea* լատ. – *հանցավոր մտադրություն*, *excess of jurisdiction* → *ultra vires* լատ. – *իրավասության վերազանցում* (դատավորի կամ հաշտարար դատավորի կողմից և այլն), և

- կրկնակ, եռյակ կամ քառյակ հոմանիշային զուգաձևություն-տերմինները (օր.՝ *successors and assigns* – *իրավահաջորդներ*, *give, devise and bequeath* – *անշարժ և շարժական գույք կտակել*, *in lieu, in place, instead and in substitution of* – *փոխարենը* և այլն):

Աշխատանքի **Երրորդ Գլուխը՝ «Փոխաբերական տեղաշարժը որպես անգլերեն իրավաբանական տերմինների ստեղծման հիմք»**, բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում (*Փոխաբերույթը որպես տեսական քննության առարկա. Փոխաբերույթի էությունը*) անդրադարձ է կատարվում փոխաբերույթի վերաբերյալ տեսություններին¹¹ և փոխաբերույթ հասկացության էությանն ընդհանրապես:

Փոխաբերույթը¹², որպես այլաբերական հնար, մշտապես գտնվել է տարբեր ժամանակների մեծ մտածողների ուշադրության կենտրոնում և հետաքրք-

¹¹ Richards I. A. *The philosophy of rhetoric*. London: Oxford Univ. Press, 1936; Black M. *Models and metaphors: Studies in language and philosophy*. Ithaca, NY: Cornell Univ. Press, 1962; Black M. *More about metaphor*. // *Metaphoric thought*. / Ortony. A. (ed.). Cambridge: Cambridge Univ. Press 1980, pp. 19-45; Lakoff G., Johnson M. *Metaphors we live by*. Chicago: Univ. of Chicago Press, 1980; Lakoff G., Turner M. *More than cool reason: A field guide to poetic metaphor*. Chicago: Univ. of Chicago Press, 1989.

¹² Անգլերեն *metaphor* տերմինը փոխառված է 16-րդ դարի հին ֆրանսերենից (*me'taphore*), որն իր հերթին փոխառել է լատիներենից (*metaphora*): Իսկ վերջինիս աղբյուրը հունարեն *metaphora* բառն է (*meta-* միջև և *phero-* փոխադրել, փոխանցել, տեղափոխել): Որոշ աղբյուրներ (Ադայան Է. Բ. *Լեզվաբանության ներածություն*: Երևան, ԵՊՀ 3-րդ հրատ., «Մխոք», 1967, էջ 264, 1987: 337-343) *metaphor* երևույթի համար առաջարկում են *փոխաբերություն* տերմինը, իսկ որոշ աղբյուրներ (Խղաթյան Ֆ. Հ., նույն տեղում, էջ 100-102, Ջահուկյան Գ. Բ., Խղաթյան Ֆ. Հ. *Հայոց լեզվի ուղարանություն*: Երևան, «Ջանգակ» հրատ., 2007, էջ 81, 91-93)՝ *փոխաբերույթ* տերմինը: Սույն աշխատությունում մենք գործածում ենք *փոխաբերույթ* տերմինը: Փոխաբերույթը դարձույթ է՝

րական ու արդյունավետ նյութ է տվել ամենատարբեր գիտություններին՝ դառնալով գիտական տեսությունների և մեթոդների բացահայտման աղբյուր: Ոճական այս ինքնատիպ և շարժունակ հնարի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններն այն համարում են գեղարվեստական խոսքի ձևավորման կարևորագույն տարր: Սակայն, միևնույն ժամանակ, չպետք է սահմանափակվել՝ փոխաբերույթը միայն իր գունագարդման կամ դրվագագարդման դերի սահմաններում դիտարկելով: Անհրաժեշտ է կարևորել փոխաբերույթի արժեքավոր դերը նոր տեսություններ և դրույթներ ներմուծելու և դրանով ճանաչողական գործընթացներին նպաստելու հարցում, քանի որ նորանոր ունակությունների և հնարավորությունների մշտական դրսևորումները թափանցում են իրական կյանքի բազմազան բնագավառներ և բացահայտում մարդկային մտածողության նոր շերտեր:¹³

Այժմ, երբ փոխաբերույթը գլխավորապես ընկալվում է որպես մտքի զարգացման գործընթացում կենտրոնական դեր կատարող հասկացական կառույց և որակվում է իբրև մտքի և դատողության սկզբունքային, հիմնական գործիք, ուշադրության կենտրոնում է հայտնվել փոխաբերույթի ճանաչողական բնույթը, ասել է թե փոխաբերույթի մասնակցությունն առարկան վերահիմաստավորելու և նոր երևույթ ու իմաստային նոր դաշտ ստեղծելու գործում: Առաջ է քաշվել նաև փոխաբերույթի դերը ճանաչողական գործընթացներում, այսինքն փոխաբերույթի՝ հասկացական գործիք լինելու ունակությունը:

Այս գլխի երկրորդ ենթագլխում (*Փոխաբերական մտածողության դրսևորումներն անգլերեն իրավաբանական խոսքում*) անգլերեն իրավաբանական տերմինների նյութի հիման վրա բացահայտվում է անգլերեն իրավաբանական տերմինաբանության կամ տերմինահամակարգի կախյալման գործընթացում կարևոր նշանակություն ունեցած ինքնատիպ միջոցներից մեկի՝ տերմինացման (տվյալ դեպքում փոխաբերականացման) յուրօրինակությունը և հանգամանորեն դիտարկվում են մարդկային լեզվի անբաժանելի բաղադրատարր հանդիսացող փոխաբերական մտածողության նշանակությունն ու դրա դրսևորումներն անգլերեն իրավաբանական խոսքում:

Անգլերենում փոխաբերական մտածողությունը հատուկ է թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի բոլոր դրսևորումներին (գեղարվեստական գրականություն, պատմագրություն, տեղեկատվական բնույթի շարադրանքներ և այլն):¹⁴ Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրավաբանական անգլերենում՝ մասնավորապես ամերիկյան իրավաբանական խոսքում, փոխաբերական մտա-

հիմնված բառերի փոխաբերական գործածության վրա՝ ըստ նրանց արտահայտած առարկաների, երևույթների արտաքին կամ ներքին նմանության:

¹³ Այս առումով առանձնակի ուշադրության է արժանի Լակոֆֆի և Ջոնսոնի *Metaphors We Live By* աշխատությունը, որում փորձ է արվում տեղափոխել փոխաբերույթը բառերի ոլորտից մտածողության և գործողությունների ոլորտ և նրա օգնությամբ բացահայտել հասարակական ամենատարբեր երևույթներ (Lakoff G., Johnson M., *ibid*):

¹⁴ Մասնավորապես տե՛ս Bosmajian H. *Metaphor and reason in judicial opinions*. Carbondale: Southern Illinois Univ. Press, 1992; Hibbits B. J. *Making sense of metaphors: Visuality, aurality and reconfiguration of American legal discourse*. // Cardozo Law Review, Vol. 229. NY: Yeshiva Univ. Press, 1994.

ծողությունը կարող է դրսևորվել տարաբնույթ (ինչպես տեսողական, այնպես էլ լսողական) փոխաբերությունների տեսքով: Բանն այն է, որ ամերիկյան մշակույթում և լեզվում առկա տեսողականության գերակայության արդյունքում, ամերիկյան օրենքը, նույնպես արձագանքելով և ակտիվորեն օժանդակելով համամշակութային տեսողականության միտմանը, կիրառում է **տեսողական փոխաբերություններ**: Օրինակ օգտագործելով *practising law is seeing* (*կիրառել, գործադրել օրենք նշանակում է տեսնել*) հասկացական փոխաբերությամբ՝ ամերիկացի իրավաբաններն *օրենքի տեսանկյունից* (*in the eye of the law*) են գնահատում իրավապահանջները, իսկ նրանց վերին ատյանները *վերանայում* են (*review*) ստորին ատյանների որոշումները: Իրավաբանական առանձին հասկացություններ նույնացվում են տեսողական պատկերների հետ, այսպես՝ *գույքային իրավունքները* դիտվում են որպես *a bundle* (խուրձ) *of sticks* (փայտիկներ, ձողիկներ), *վաղեմի սահմանադրական օրենքը՝ fixed* (հաստատուն, անշարժ) *star* (աստղ), իսկ *ինչ-որ բանի տեր լինելու իրավունքի հերթագայությունը՝ chain* (շղթա) *of title* (տնօրինում):

20-րդ դարավերջին ամերիկյան հասարակությունում տեսողականից լսողականին մշակութային ընդհանուր անցումով պայմանավորված՝ ամերիկյան ակադեմիական իրավաբանական խոսքում ի հայտ է գալիս լսողականության նախնական միտում, և արձանագրվում է **լսողական փոխաբերությունների** հոսք: Ըստ այդմ՝ օրենքը բնութագրվում է որպես *ձայնի* (*voice*) գործ,¹⁵ պատկերավոր *ելույթ* (*speaking*) և նույնիսկ *երգեցողություն* (*singing*),¹⁶ որում հաստատությունները, խմբերը և անհատները պետք է լինեն իրենց մտքերը հստակ արտահայտող մասնակիցներ: Որոշ ձայներ ուժեղ են, որոշները՝ թույլ, իսկ որոշ ճնշված ու աննշան ձայներ նախ պետք է ձերբազատվեն *լռության* կապանքներից (*shackles of silence*),¹⁷ քանի որ արդարությունը պահանջում է դատական *լսում* (*hearing*) և այս բոլոր ձայների ուշադիր *ունկնդրում* (*listening*):¹⁸

Հայտնի է, որ ստուգաբանական ինչ արմատներ էլ ունենան տերմինները, որպես կանոն, դրանց ձևավորման հիմքը՝ տերմինաստեղծման հիմնական աղբյուրներից մեկը, տվյալ լեզվի համագործածական բառաֆոնդն է:¹⁹ Համագործածական և տերմինաբանական բառապաշարների միջև անջրպետ չկա.

¹⁵ Culp J. M. Jr., *Voice, perspective, truth, and justice: Race and the mountain in the legal academy.* // *Loy. L. Rev.*, Vol. 38, 1992, pp. 60-66.

¹⁶ Hutchinson A. C. *Democracy and determinacy: An essay on legal interpretation.* // *U. Miami L. Review.*, Vol. 43, 1989, pp. 540-545.

¹⁷ Finley L. *Breaking women's silence in law: The dilemma of the gendered nature of legal reasoning.* // *Notre Dame L. Rev.*, Vol. 64, 1989, pp. 882-889.

¹⁸ Tidwell P. A., Linzer P. *The Flesh-colored contracts, feminism, dialogue and norms.* // *Hous. Law Rev.*, Vol. 28, 1991, pp. 790-817.

¹⁹ Лотте Д. С. *Изменение значений слов как средство образования научно-технической терминологии.* М.: Наука, 1961; Веселов П. В. *Структура термина в аспекте семиотики.* // Место терминологии в системе современных наук. Научный симпозиум (Тезисы докладов и сообщений). М.: МГУ, 1970, с. 93-99. Арутюнова М. Д. *Языковая метафора.* // Лингвистика и Поэтика. М., 1979, с. 147-179; Гринев С. В. *Учет особенностей развития терминологии в образовании и заимствования новых терминов.* // Проблемы разработки и упорядочения терминологии в академиях наук союзных республик. М.: Наука, 1983, с. 135-142.

դրանց փոխադարձ կապը բավական ամուր է, իսկ փոխներթափանցման գործընթացը՝ ակտիվ: Շատ բառեր, որոնք ընկալվում են որպես ընդհանուր գործածական՝ ոչ տերմինային միավորներ, ներթափանցելով տերմինաբանական բառապաշար, ձեռք են բերում տերմինային իմաստ ու գործառույթ և վերածվում գիտության կամ արտադրության որևէ ճյուղի տերմինի: Այսպիսով՝ տվյալ լեզվի հնարավորություններով և փոխաբերական տեղաշարժի (մետաֆորիկ փոխակերպման, փոխաբերականացման կամ վերաիմաստավորման) միջոցով ստեղծված լեզվական միավորները, որոնք արդյունքում ձեռք են բերում տերմինային իմաստ ու արժեք՝ արտահայտելով գիտական հասկացություններ, կոչվում են **ասոցիատիվ տերմիններ կամ տերմին-դարձույթներ**, իսկ ասոցիատիվ տերմինների համակարգի ստեղծումը համարվում է արվեստ՝ **տերմինակերտում**:

Ինչպես փաստում են որոշ աղբյուրներ²⁰, անգլերենի զարգացման հին, միջին և նոր շրջաններում վերաիմաստավորման արդյունքում համագործածական շատ բառեր փոխակերպվել են տերմինների և դարձել այնպիսի բազմազան ոլորտների տերմինաբանության լիիրավ անդամներ, ինչպիսիք են՝ բանահյուսությունը, դրամագիտությունը, ճարտարապետությունը, աստղագիտությունը, ռազմագիտությունը, ծովագնացությունը, լեռնագործությունը, որսորդությունը, ոսկերչությունը, մասնաձագործությունը և տեխնիկան: Ժամանակակից անգլերենում նոր տերմինների և տերմինահամակարգերի զանգվածային պահանջին զուգընթաց արձանագրվել է տերմինացման գործընթացի աննախադեպ և նշանակալից աճ՝ պայմանավորված գիտատեխնիկական առաջընթացով:

Երրորդ ենթադիտում (*Անգլերեն իրավաբանական տերմին-դարձույթները որպես փոխաբերական տեղաշարժի արդյունք*) հանգամանորեն քննվում են անգլերեն իրավաբանական տերմինաբանության մեջ առկա տերմին-դարձույթների հնարավոր դրսևորումները: Առանձնացվում և վերլուծվում են իմաստային առումով մակերեսային և խորքային իրավաբանական տերմին-դարձույթներ:

Փոխաբերույթը դիտարկելով որպես խոսքային ներակայման ձևերից մեկը՝ կարելի է տարբերակել ներակայության ցածր և բարձր աստիճաններով փոխաբերույթներ: Երկու դեպքում էլ փոխաբերույթը հիմնվում է իմաստի փոխանցման վրա, բայց առաջին դեպքում ներակայությունը ձեռք է բերվում համեմատվող տերմինների ակնհայտ նմանության հիմքի վրա՝ արտացոլելով առարկաների ու երևույթների միջև առկա հարաբերություններ, իսկ երկրորդ դեպքում նշանային կազմավորումների անսովոր և անհամատեղելի համադրումը նպաստում է նոր հարաբերությունների բացահայտմանը, ինչն էլ դժվարացնում է ընկալման գործընթացը: Որպես կանոն ընկալման մեխանիզմը տրամաբանական գործողությունների հաջորդական շղթա է, որի շնորհիվ

²⁰ Омельяненко Т. И. Терминологизация общеупотребительной лексики в истории английского языка. // Язык и стиль научного изложения. Лингвометодические исследования. М.: Наука, 1983, с. 88-100.

ապահովում է ներդաշնակ կապը մակերեսային (իմաստային) և խորքային (վերիմաստային) մակարդակների միջև: Ըստ այդմ՝ փոխաբերականացման եղանակով ստեղծված իմաստային առումով **մակերեսային տերմին-դարձույթների** նշանակությունը կարող է բխեցվել փոխաբերական տեղաշարժի հիմքը հանդիսացող՝ աղբյուր տիրույթի բառային միավորից, այսինքն՝ երբ տերմինաստեղծման հիմք հանդիսացող փոխաբերվող բառի փոխաբերական իմաստը կախման մեջ է կապակցվող բառից, և փոխաբերվող բառն ինքնին թելադրում է համապատասխան փոխաբերական իմաստը: Օրինակ՝ *աշխատանքի օրենսդրություն* բառակապակցությունը վերարտադրվում է որպես *the law of master and servant* (master – տեր, servant – ծառա), այսինքն՝ տերն ու ծառայի օրենք՝ գործատուի և վարձու աշխատողի օրենք:

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անգլերեն իրավաբանական տերմինների հիմքում ընկած փոխաբերականացման հնարավոր դրսևորումներից են իմաստային առումով մակերեսային **կազմախոսական փոխաբերույթները** կամ **անտրոպոմորֆները**, որոնց հիմքում կենդանու կամ մարդու մարմնի մասերի անունների, օրգանների կամ դրանց գործառույթների հետ կապված առարկաների ու երևույթների արտաքին կամ ներքին նմանությունը կամ առնչությունն է: Այս տիպի փոխաբերույթները մարմնի հանդեպ ունեցած տիպիկ ազգային զգայական ընկալման ու կենսափորձի արդյունք են: Այսպես, զուգահեռներ են տարվում *arm* (թև, բազուկ) և *ուժ ու իշխանություն* երևույթների միջև: Ըստ այդմ՝ *arm* բառային միավորի օգնությամբ ստեղծվում են այնպիսի կազմախոսական տերմին-դարձույթներ, ինչպես՝ *arm of law – օրենքի ուժ* կամ *enforcement arm – օրենքը հարկադրող, պարտադրող օրինապահ մարմին*:

Ի տարբերություն մակերեսային տերմին-դարձույթների՝ իմաստային առումով **խորքային իրավաբանական տերմին-դարձույթների** աղբյուր տիրույթի բառային միավորից չի կարող ուղղակիորեն ու պարզորոշ կերպով բխել թիրախ տիրույթում դրսևորված նշանակությունը, այսինքն՝ տերմինացված միավորի տերմինային իմաստը, և միայն տերմինի՝ իմաստային առումով խորքային վերլուծության արդյունքում կարելի է հասկանալ փոխաբերական տեղաշարժի միջոցով ստեղծված միավորի նշանակությունը: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անգլերենի իրավաբանական տերմինաբանության մեջ իմաստային առումով խորքային տերմին-դարձույթների շարքին են դասվում ազգային մտածողության ինքնատիպ կնիքը կրող տերմին-դարձույթները, սպորտային տերմին-դարձույթները, սլենգային միավորները և մասնագիտական ժարգոնային տերմին-դարձույթները: Դիտարկենք խորքային տերմին-դարձույթների օրինակներ:

- *Kangaroo court / trial* (*kangaroo* – կենգուրու, *court* – դատարան, *trial* – դատավարություն) արտահայտությունն **ազգային մտածողության ինքնատիպ կնիքը կրող անգլերեն իրավաբանական տերմին** է և տերմինային նշանակությամբ ունի *սայօրինի դատարան* իմաստը: **Կենդանական կամ գոմորֆ** այս **տերմին-դարձույթում** այն ակնարկն է, որ մի խումբ մարդկանց կողմից ստեղծ-

ված ոչ պաշտոնական անօրինական դատարանը շրջանցում է օրենքը նույն հեշտությամբ, ինչ հեշտությամբ կենգուրուն ցատկելով հաղթահարում է խոչընդոտները: Անգլերեն իրավաբանական տերմինաբանության մեջ գործածական է նաև *kangaroo* (կենգուրու) բառային միավորը՝ *մեջընդմեջ քննարկում* (օրինագիծը քննարկելու եղանակ) տերմինային իմաստով: Կենդանական այս տերմին-դարձություն ևս ընկած է այն գաղափարը, որ ինչպես կենգուրուն է ցատկելով խոչընդոտները հաղթահարում, այնպես էլ օրինագիծը քննարկելիս որոշ հոդվածներ առանց քննարկվելու ուղղակի քվեարկվում են, որից հետո սկսվում է առավել կարևոր հոդվածի քննարկումը:

• *Bench* (նստարան) *warmer* (տաքացնող) **սպորտային տերմին-դարձույթն** աղբյուր տիրություն՝ ֆուտբոլում, ունի *ֆուտբոլային հանդիպմանը չմասնակցող մասնակից, պահուստային խաղացող* նշանակությունը,²¹ իսկ թիրախ աղբյուրում՝ *պատրաստված անձ* (օրինակ՝ վկա), որը անհրաժեշտության դեպքում է մասնակցություն ցուցաբերում:

• Փոխաբերական տեղաշարժի միջոցով ստեղծված ոչ պաշտոնական միջավայրում կիրառելի անգլերեն իրավաբանական **սլենգային տերմին-դարձույթի** օրինակ է *horse shedding* միավորը: Իրավաբանական տերմինաբանության մեջ կիրառելի *սուտ վկայություն տալու* պաշտոնական անվանումն անգլերենում հանդես է գալիս *subornation of perjury* տերմինի տեսքով, մինչդեռ այդ նույն նշանակությամբ կա սլենգային տերմին՝ *horse shedding*, որի ստեղծման գործընթացում փոխաբերականացումը տեղի է ունեցել *horse – ձի* և *shed – ծածկ, մառան, ցախատուն* միավորների՝ որպես ընհանուր գործածական բառերի ներսում: Իսկ փոխաբերականացման այս գործընթացը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ ժամանակին դատարանների տարածքում ձիերի ախոռներում թաքնվելով՝ փաստաբան-հավատարմատարները հրահանգներ էին տալիս վկային կամ սպասարկչային, թե ինչպես վկայություն տա:²²

• **Մասնագիտական ժարգոնային տերմին-դարձույթների** օրինակներ են *fruits of the poisonous tree* (բառացի թարգմանությամբ՝ թունավոր ծառի պտուղ) – *անօրինական ճանապարհով՝ առանց խուզարկության կարգադրագրի ձեռք բերած ապացույց*, կամ *ostrich instruction – հանցավոր մտադրության հերքում* (բառացի՝ *ջայլամի հրահանգ*, այսինքն՝ երբ պատասխանողը ջայլամի մման գլուխն ավազի մեջ է թաքցնում՝ հերքելով իր հանցավոր մտադրությունը, երբ կան բավարար ակնհայտ փաստեր և ապացույցներ):

Ատենախոսության **Եզրակացություն** բաժնում ի մի են բերվում կատարված ուսումնասիրության արդյունքները:

1. Անգլերեն իրավաբանական տերմինահամակարգի՝ որպես մասնավոր տերմինահամակարգի կայացման գործընթացում կիրառելի են տերմինային

²¹ Palmatier R. A., Ray H. L. *ibid*, pg. 12.

²² Ավելին տե՛ս Gerhart E. C. *Quote it completely!: World reference guide to more than 5,500 memorable quotations from law and literature*. USA: William Hein & Co., 1998, pg.445.

բառապաշարի ստեղծման հետևյալ միջոցները կամ եղանակները՝ տերմինաբանական բառակազմություն, տերմինացում, հապավում և տերմինների փոխառություն: Հետևաբար, ըստ տերմինի գենետիկական կամ ծագումնաբանական տարատեսակության, անգլերեն իրավաբանական տերմինները դասակարգվում են լեզվական պատրաստի միավորների, որոնք փոխառված են սեփական լեզվի ընդհանուր գործածական բառաֆոնդից կամ տվյալ լեզվի գիտատեսնիկական այլ բնագավառներից ու օտար լեզուներից, և հատուկ ստեղծված կամ կերտված տերմինների՝ տերմինային ածանցյալների:

2. Անգլերենում իրավաբանական տերմինահամակարգի առանձնահատկությունների և բնութագրական հատկանիշների ձևավորումը պայմանավորված է տվյալ մասնավոր տերմինաբանության ստուգաբանական՝ լատինաֆրանսիական հիմքով, իսկ իրավաբանական տերմինաբանության ստուգաբանությունն իր հերթին՝ անգլերենի պատմական հանգամանքներով, բառային կազմի առաջացման նախադրյալներով և իրավաբանության զարգացման ընթացքով:

3. Իրավաբանական անգլերենը ենթալեզու է (sublanguage, Language for Special Purposes), որը տասնամյակների ընթացքում ձևավորվել է որպես լեզվաբանական սովորույթների բարդ ամբողջություն և լեզվաբանական բազմաբնույթ ավանդույթների արգասիք: Այն բնականոն զարգացում ապրած լեզվի գործածության յուրովի ոճավորված ոլորտ է և ունի իրեն հատուկ քերականություն, բառային, ոճական ու իմաստային առանձնահատկություններ: Վերջիններս թեև հաճախ շեղվում են անգլերենում հաստատված նորմերից, երբեմն հստակ, ճշգրիտ հաղորդակցության գրավական չեն և անգամ կարող են նյութի ըմբռնումը դժվարացնող, ավելորդ հավելումներ լինել, այնուամենայնիվ, իրավաբանական անգլերենի յուրատիպ ու խրթին բնույթն արտահայտող իրողություններ են: Անգլերեն իրավաբանական լեզվի պարտադիր մաս կազմող այսպիսի տարրեր են հանդիսանում լեզվական և արտալեզվական տարբեր գործոններով պայմանավորված տերմինաբանական կրկնակները կամ տերմինաբանական զուգաձևությունները, կրկնակ, եռյակ կամ քառյակ հոմանիշային զուգաձևություն-տերմինները, լատիներենից կամ ֆրանսերենից փոխառված և իրենց անգլերեն համարժեքներն ունեցող կամ չունեցող միավորները և մեծածավալ, հարուստ ու յուրատիպ բառապաշարի այլ դրսևորումներ:

4. Զիչ չեն այն դեպքերը, երբ լեզվական միավորները հանդես են բերում նկատելի շարժունակություն և հասկանալի պատճառներով անցում կատարում մի շերտից մյուսը. նախ լեզվական այդ բոլոր միավորները, ըստ էության, սնվում են ընդհանուր բառաֆոնդի ակունքներից և սոցիալական այս կամ այն պայմանների պահանջով ենթարկվում են իմաստային որոշակի փոփոխությունների: Այլ կերպ՝ դրանք փոխկապակցված են, միահյուսված, երբեմն փոխներթափանցում են ու փոխներագրում, որի արդյունքում էլ համագործածական բառաֆոնդի շատ միավորներ, փոխաբերականացվելով մասնավոր տերմինաբանություններում, ձեռք են բերում տերմինաբանական բնույթ:

5. Փոխաբերականացման արդյունքում տերմինաբանական գործառություն ձեռք բերած լեզվական միավորները դառնում են համապատասխան տերմին-

նաբանական համակարգի տարրեր և տվյալ տերմինահամակարգի միավորների հետ մտնում են իմաստային ու ձևաբանական նոր հարաբերությունների մեջ: Դրանք, որպես համագործածական բառեր, սահմանափակում են իրենց բովանդակության ծավալը՝ չդադարելով գործել ընդհանուր գրական լեզվի համակարգում, նաև այլևս հանդես չգալով համապատասխան տերմինաբանական համակարգում իրենց նախկին՝ բառային հատկանիշներով (օրինակ՝ խզում են իրենց նախկին բառային կապերը հոմանիշների, հականիշների և համանունների հետ):

6. Մարդկային լեզվի անբաժանելի բաղադրատարր հանդիսացող փոխաբերական մտածողությունն ու փոխաբերույթի կիրառությունը կենտրոնական դեր են խաղում իրավաբանական անգլերենում: Այնպիսի բազմազգայական փոխաբերույթներ, ինչպիսիք են տեսողական և լսողական փոխաբերույթները, իրավաբանական անգլերենում հանդես են գալիս որպես փոխաբերական մտածողության վառ դրսևորումներ:

7. Իրավաբանական անգլերենում սեփական լեզվի հնարավորություններով իրավաբանական հասկացություններ անվանելը, այն է՝ ընդհանուր գործածական բառերի պատկերավոր վերաիմաստավորմամբ նոր տերմիններ ստեղծելը տերմինաստեղծման նախապատվելի միջոցներից է: Մակայն սրանով հանդերձ իրավաբանական անգլերենում բնավ էլ հազվադեպ չէ այն երևույթը, երբ տերմինաստեղծման հիմքում ընկած է փոխաբերական տեղաշարժը՝ որպես նոր հասկացությունների ներմուծման լեզվաբանական տրամաբանական արդյունավետ միջոց: Այլ կերպ՝ փոխաբերականացումն անգլերեն իրավաբանական տերմինահամակարգը նորանոր գիտական հասկացություններով համարող ու հարստացնող արդյունավետ միջոց է:

8. Անգլերենում իրավաբանական տերմինների ստեղծման գործընթացում փոխաբերականացումը (մետաֆորիկ փոխակերպումը, փոխաբերական տեղաշարժը կամ վերաիմաստավորումը) կարևոր դեր ու նշանակություն ունի տերմինաբանական բառապաշարի համալրման և տվյալ լեզվի բառաֆոնդի հարստացման համար և պայմանավորված է՝ ա) լեզվական կադասարում հայտնիի նոր սահմանների առանձնացմամբ և նյութականացմամբ՝ անվանելով նոր իրույթներ՝ ներմուծելով նոր հասկացություններ, այսինքն՝ նոր հասկացությունների համար նոր տերմիններ ստեղծելու անհրաժեշտությամբ և բ) հասկացությունը կրկնակի անվանելու անհրաժեշտությամբ:

9. Բառիմաստային վերլուծության մեթոդի կիրառմամբ հնարավոր է առանձնացնել փոխաբերական տեղաշարժի միջոցով ստեղծված անգլերեն իրավաբանական տերմին-դարձույթների հետևյալ դրսևորումները՝ ներակայության ցածր և բարձր աստիճաններով տերմիններ, այսինքն՝ իմաստային առումով մակերեսային և խորքային այնպիսի իրավաբանական տերմին-դարձույթներ, ինչպիսիք են՝ կազմախոսական տերմին-դարձույթները կամ անտրոպոմորֆները, կենդանական տերմին-դարձույթները կամ գոմորֆները, ազգային մտածողության յուրատիպ կնիքը կրող տերմին-դարձույթները, սպորտային տերմին-դարձույթները, պենզային և մասնագիտական ժարգոնային տերմին-դարձույթները:

10. Այն փաստը, որ տերմին-դարձույթների ստեղծման հիմքում ընկած է փոխաբերականացում, բնավ հիմնարար պատճառ չէ ենթադրելու, որ այդպիսի տերմիններն ունեն գեղագիտական ու հուզական բնույթ: Իրավաբանության մեջ դրանք գործածվում են իրենց բուն տերմինային իմաստով, արտահայտում գիտական ճշգրիտ հասկացություններ, հաղորդում գիտական փաստեր ու տեղեկություններ և կատարում մի կողմից գիտական տեղեկատվության գործառույթ, իսկ մյուս կողմից՝ ճանաչողական:

11. Առհասարակ, տերմինացման կամ իմաստային փոխակերպման եղանակով ստեղծված տերմինը համապատասխանում է տերմինի գնահատման չափանիշներին՝ բավարարելով տերմինին առաջադրված չափանշային թե՛ պարտադիր պահանջները (ինչպիսիք են՝ ճշգրտությունը, միանշանակությունը, մենիմատությունը, տերմինաբանական ներհամակարգում հոմանիշների բացառումը և համակարգայնությունը), թե՛ ցանկալի, կամընտրական պահանջները (համանունների, կրկնակ-տերմինների հնարավոր դեպքերը, հուզարտահայտչական երանգավորման բացակայությունը, հակիրճությունը):

12. Տերմինացման ենթարկված բառերը, հանդես գալով առանձին տերմինահամակարգում, չեն խախտում տերմինների և նրանց իմաստների համակարգայնությունը և շփոթ չեն առաջացնում:

13. Անգլերենի իրավաբանական տերմինների ստեղծման գործում փոխաբերական տեղաշարժի միջոցով ստեղծված տերմին-դարձույթները ոչնչով չեն զիջում տերմինաստեղծման ցանկացած այլ միջոցով ստեղծված տերմիններին: Դրանք, ինչպես և շարքային տերմինները, գիտական նյութը և իրողությունը ներկայացնող լեզվական կարևորագույն միավորներ են. ունեն հագեցած նշանակություն, ավելի թափանցիկ են, առավել շոշափելի և տեսանելի, ինչպես նաև հեշտ են հիշվում և ունեն պատճառաբանված իմաստ:

14. Փոխաբերական տեղաշարժի արդյունքում համագործածական բառաֆոնդից արտագաղթած, մասնագիտական խոսքում «քաղաքացիության լիիրավ իրավունք» ստացած և տերմինային իմաստ ու գործառույթ ձեռք բերած միավորները հանդես են գալիս որպես գիտական տեղեկատվությունը մաքուր, անխառն ու տրամաբանված ձևով հաղորդող տարրեր՝ գործառական ոճերի տարատեսակներ հանդիսացող գիտական և պաշտոնական ոճերի բառապաշարի հիմնական շերտի ոճակագմիչ նշանակություն ունեցող լիարժեք միավորներ:

15. Վերոնշյալ բոլոր եզրահանգումները հիմք են տալիս փաստելու, որ իրավաբանական անգլերենում առկա իմաստաբովանդակային առումով ոճատարբերակիչ այդօրինակ տարրերը՝ փոխաբերական տեղաշարժի արդյունքում ստեղծված անգլերեն իրավաբանական տերմին-դարձույթները, իրավաբանության բնագավառին հատուկ, պայմանականորեն կամ հարաբերականորեն ճշգրիտ և ստույգ սահմանելի հատուկ մասնագիտական հասկացությունների ամբողջությունը ներկայացնող համակարգի լիիրավ տարրեր են:

Աշխատանքի քննարկումը և հրապարակումները

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ-ի անգլիական բանասիրական և Երևանի «Գլաձոր» համալսարանի Օտար լեզուների ամբիոնների նիստերին, ինչպես նաև Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի կազմակերպած երրորդ միջազգային գիտաժողովին (Երևան, 2011թ. հոկտեմբերի 4-8-ը):

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Տերմինային ստորակարգություն և համակարգայնություն (անգլերեն իրավաբանական տերմինների նյութի հիման վրա) // Օտար լեզուները Հայաստանում: Գիտամեթոդական հանդես, ՀՀ ԿԳՆ, Կրթության ազգային ինստիտուտ, 2011, N 2, էջ19-31:

2. Անգլերենի իրավաբանական տերմինահամակարգը որպես պատմական զարգացման արդյունք // «Գլաձոր-20»: Հոդվածների հոբելյանական ժողովածու: Երևանի «Գլաձոր» համալսարան: Երևան, Նոյան Տապան, 2011, էջ 674-687:

3. Փոխաբերույթը և մետաֆորիկ մտածողությունը իրավաբանական անգլերենում // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում: Գիտական հոդվածների ժողովածու: Երևան, «Զանգակ-97» հրատ., 2011, N 3, էջ 28-37:

4. Sports Metaphors in American Legal Proceedings // AASE Third International Conference, Language, Literature and Art in Cross-Cultural Contexts, Programme and Abstracts, Yerevan State University, Yerevan, October 4-8, 2011, pp. 119-120:

ЛИЛИТ СЕРЖИКОВНА СААКЯН

**ПРОБЛЕМА МЕТАФОРИЧЕСКОГО СДВИГА
В ТЕРМИНООБРАЗОВАНИИ
(на материале английских юридических терминов)**

Диссертация на соискание ученой степени
кандидата филологических наук
по специальности 10.02.07 "Германские языки"

Защита состоится 27-ого апреля 2012г. в 16:00
на заседании специализированного совета 009 ВАК РА, действующего в Ереванском
государственном университете (Ереван, Алека Манукяна 1)

РЕЗЮМЕ

Реферируемая диссертация посвящена подробному исследованию одной из важнейших проблем в области терминологии - способов терминообразования в юридическом английском, в особенности метафорического сдвига, рассматриваемого как основу образования английских юридических терминов.

Материалом исследования послужили около 25.000 юридических терминов и терминологических сочетаний внесенных в ряд словарей и судебных дел размещенных на официальном сайте центра при Высшем Суде США.

Актуальность исследования связана с тем, что экстралингвистическая основа юридического английского расширилась, включая в себя столкновения всеобщих, международно общественных, политических внешних и внутренних интересов. В сущности в настоящее время не требуются особые факты, что юридический английский является международным языком - имеющим важное значение. Таким образом, актуальность исследования связана с той значимой ролью, которую играет юридический английский в общественной жизни.

Новизна работы заключается прежде всего в рассмотрении довольно интересной проблемы, оставшейся вне поле зрения терминологию. Впервые делается попытка на материале английских юридических терминов изучить проблему метафорического сдвига в процессе терминообразования.

Теоретическая значимость исследования связана с точностью, пояснением и аргументацией постановки вопроса ставящегося в этом исследовании. А также в теоретическом плане исследование проведенное в этой работе и вследствие этого сделанные выводы вносят определенный вклад в развитии теории лексикографии.

Ценность практической значимости диссертации состоит в том, что результаты данного исследования можно продуктивно использовать в преподавании английского языка, в особенности вклада практического преподавания юридического английского. Помимо этого, разностороннее исследование лексикосемантических свойств юридической терминологии, разработанные в диссертации теоретические положения и результаты могут способствовать повышению продуктивности преподавания юридического английского на высоком уровне. Подведенные итоги исследуемой темы и подчеркивающиеся выводы могут способствовать созданию учебно-методических пособий для преподавания английского в особых целях.

LILIT S. SAHAKYAN

**THE PROBLEM OF METAPHORIC DISPLACEMENT
IN THE PROCESS OF TERM FORMATION
(with special reference to English legal terms)**

SUMMARY

It is common knowledge that rich and well-shaped vocabulary is a premise for a developed language. Terms and terminological combinations have a special place in the word stock of any language.

The focus of the present research is the juridical terminology in English which is an extremely interesting and important sphere of investigation. As seen from the title of the work the primary goal of the present research is to investigate the problem of metaphoric displacement as a common and highly productive means of term formation in the field of law English.

The novelty of the work is based on our observations in the sphere of English legal terminology which have revealed the productivity of metaphoric displacement in the process of term formation. In the present paper for the first time an attempt is made to bring out the role of metaphORIZATION in the formation of English legal terms and terminological expressions.

It is beyond suspicion that legal English stands as a sublanguage of paramount international importance. The extralinguistic bases of legal English has nowadays been extended embracing conflict of overall international-social, political foreign and home interests. Thus *the vital importance* of the subject is accounted for by the substantial and decisive role legal English plays in our social life.

The theoretical value of the thesis is conditioned by the precision, interpretation and substantiation of the questions covered within the scope of the given work. The study of the issues analysed in the paper and the conclusions drawn as outcomes of the investigation accomplished may serve as a valuable contribution to the development of the theory of lexicography.

The practical significance of the work is established with the productive usage of the outcomes in EFLT and especially in teaching English for special purposes, as well with the implementation of the outcomes as a valuable contribution to compiling teaching and methodological handbooks.

The paper consists of an introduction, 3 chapters with several subchapters supplied with notes, a conclusion, a bibliography and appendices.

Introduction presents the goals and objectives, the novelty, the vital importance, the theoretical and practical significance of the thesis, as well as the implemented techniques and approaches to achieve the above mentioned objectives.

Chapter One covers a detailed analysis of such highly significant linguistic phenomena as terminological macrosystems and microsystems, coordinate and subordinate terms, terminological subordination and terminological coordination, the compulsory nature of logical and the optional nature of linguistic (paradigmatic) systematization of terminological phenomena within the scope of English legal terminology.

Chapter Two examines theoretically possible means of legal English term formation, and presents its characteristic features and some pivotal and challenging issues that deal with the multifaceted nature of legal English based on the comprehensive historic review of legal English provided in this chapter.

Chapter Three establishes the importance of metaphor and its omnipresent and central role in legal English reasoning. Special attention is given to the study of conceptual and multi-sensory metaphors as an outcome of metaphoric reasoning in legal English, as well as a detailed analysis of the possible manifestations of metaphoric displacement in the process English legal terms and terminological expressions is covered.

Conclusion presents the main findings of the research which reveal the productivity of metaphoric displacement in the process of legal English term formation, singling out such term-tropes as anthropomorphisms, zoomorphisms, realias, slang terms and jargonisms.